

**5.9. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության
2004թ. օգոստոս ամսվա մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2004թ. օգոստոս ամսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

Օդային ավազանի որակի մոնիթորինգ: Օգոստոսին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում:

Նշված բնակավայրերի 11 դիտակայանների միջոցով վերցվել է օդի 2376 փորձանմուշ: Որոշվել են մթնոլորտն աղտոտող նյութերի կոնցենտրացիաները:

- Երևան քաղաքում օգոստոսին վերցվել է օդի 1024 փորձանմուշ: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 4.7, ծծմբի երկօքսիդին՝ 3.4, ազոտի երկօքսիդին՝ 4.0, ազոտի օքսիդին՝ 1.3, օզոնին՝ 4.2 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 3.6, օզոնին՝ 1.6 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.4, ազոտի երկօքսիդին՝ 1.2, ազոտի օքսիդինը և օզոնին՝ 1.3-ական անգամ:

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական
կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին տարեկան
Փոշի	-	0.7
Ծծմբի երկօքսիդ	0.32	0.17
Ազոտի երկօքսիդ	0.31	0.16
Ազոտի օքսիդ	0.18	0.08
Օզոն	0.255	0.127
Բենզոլ	0.195	0.078
Տոլուոլ	0.513	0.099
Քսիլոլ	-	-
Էթիլ բենզոլ	-	-
Քլորոպրեն	-	-

- Գյումրի քաղաքում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.7 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:
- Վանաձոր քաղաքում վերցված օդի 780 փորձանմուշների մեջ որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0, ծծմբի երկօքսիդին՝ 1.4 անգամ: Ածխածնի օքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4 անգամ: Հուլիս ամսվա համեմատ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ:

Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին տարեկան
Փոշի	-	0.3
Ծծմբի երկօքսիդ	0.15	0.07
Ածխածնի օքսիդ	7.0	3.0
Ազոտի երկօքսիդ	0.08	0.03

- Հրազդան քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.0 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.7 անգամ:
- Ալավերդի քաղաքում վերցված օդի 494 փորձանմուշների մեջ որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 10.2, ազոտի երկօքսիդինը՝ 1.3 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար՝ 1.9 և 1.5 անգամ: Հուլիս ամսվա համեմատ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2 անգամ:

Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին տարեկան
Փոշի	-	0.1
Ծծմբի երկօքսիդ	0.97	0.51
Ածխածնի օքսիդ	4	2
Ազոտի երկօքսիդ	0.13	0.05

- Արարատ քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: Օգոստոսին մակերևութային ջրերի նմուշառում կատարվել է Փամբակ, Դեբեդ, Ջորագետ, Մարցիգետ, Ախթալա, Հրազդան, Գետառ գետերից և Երևանյան լճից:

Վերցվել է 13 փորձանմուշ, կատարվել է 342 ցուցանիշի փորձազննում (8-ում որոշվել է 24 ցուցանիշ, իսկ 5-ում՝ 30 ցուցանիշ):

Փամբակ գետում՝ Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածքում, ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 5.8, իսկ միտրիտ իոնինը՝ 8.3 անգամ:

Վանաձոր քաղաքից վերև և Ախթալա գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքներում ամոնիում իոնի նորման գերազանցվել է 1.3, իսկ Այրում բանավանից վերև ընկած հատվածքում՝ 1.1 անգամ:

Դեբեդ գետի ավազանից վերցված մյուս փորձանմուշներում միտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3-3.3 անգամ:

Ախթալա գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքում գերազանցվել է նաև սուլֆատ իոնի թույլատրելի նորման՝ 3.8 անգամ:

Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում:

Հրազդան գետում անոմիում իոնով բարձր աղտոտվածություն (ՍԹԿ գերազանցում 10-ից մինչև 100 անգամ) դիտվել է Դարբնիկ գյուղի մոտ (22.7 անգամ) և գետաբերանի մոտ (12.7 անգամ) ընկած հատվածքներում և Գետառի գետաբերանի մոտ ընկած հատվածքում (12.6 անգամ):

Սիտրիտ իոնով բարձր աղտոտվածություն դիտվել է Գետառի գետաբերանի մոտ ընկած հատվածքում (13.8 անգամ) և Երևանյան լճում (13.0 անգամ):

Հրազդան գետում՝ Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում, թթվածնային ռեժիմի անբավարարության հետևանքով դիտվել է նաև ԹԿՊ₅-ով բարձր աղտոտվածություն՝ 18.7 մգ Օ₂/դմ³:

Սիտրիտ իոնի ՍԹԿ-ն Հրազդան գետում՝ Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում, գերազանցվել է 3.2, իսկ գետաբերանի մոտ ընկած հատվածքում՝ 7.0 անգամ (այս հատվածքում 3.5 անգամ գերազանցվել է նաև ԹԿՊ₅-ի ՍԹԿ-ն):

Վերցված փորձանմուշներում նավթամթերքի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.6, պղինձ իոնինը՝ 10.0-16.0, սուլֆատ իոնինը՝ 1.2-3.3 անգամ:

Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում: